

**ՊԳԲԳՌ-ՆԵՐԻ (Պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական  
ռեսուրսների) ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԸ ԵՎ  
ՔԱՂԱՔԱԿԱԿՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

**ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՊԳԲԳՌ-ՆԵՐԻ ԱՌՆՉՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԵՐԻՆ**

Միջազգային կոնվենցիաների, համաձայնագրերի եւ արձանագրությունների միջոցով միջազգային համագործակցությունը Հայաստանը էական է համարում պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների վստահելի պահպանության եւ մատչելիության առումով: Մշակվել են ՊԳԲԳՌ-ների պահպանման եւ կայուն օգտագործման հետ կապված քաղաքականություններն ու գործողությունների ծրագրեր եւ աստիճանաբար իրականացվում են՝ համաձայն միջազգային այն կոնվենցիաների դրույթների, որոնց մասնակից կողմ է Հայաստանը:

Հայաստանի Հանրապետությունը մասնակից է շրջակա միջավայրին վերաբերող 15 կոնվենցիայի եւ 3 արձանագրության, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերաբերում են բույսերի գենետիկական ռեսուրսներին, այդ թվում.

- ♦ «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (1993 թ.)
- ♦ «Կենսաբանական անվտանգության մասին» Կարթագենյան արձանագրություն (2004 թ.)
- ♦ «Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիա (1993 թ.)
- ♦ Կիոտոյի արձանագրություն (2002 թ.)
- ♦ «Միջազգային նշանակության խոնավ տարածքների մասին» Ռամսարի կոնվենցիա (1993 թ.)
- ♦ Անապատացման դեմ պայքարի կոնվենցիա (1997 թ.)
- ♦ Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիա (2004 թ.)
- ♦ Բույսերի պաշտպանության մասին միջազգային կոնվենցիա (2006 թ.)
- ♦ ՊԳԲԳՌ-ի մասին միջազգային դաշնագիր (2007 թ.)
- ♦ ԵՆ Եվրոպայի վայրի բնության եւ բնական միջավայրի պահպանության մասին Կոնվենցիա (2008 թ.)
- ♦ Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական եւ բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին կոնվենցիա (2009 թ.)

Հետևյալ երեք միջազգային համաձայնագրերը, որոնք Հայաստանում ուժի մեջ են, ուղղակիորեն առնչվում են բույսերի գենետիկական ռեսուրսներին.

1993 թ. մայիսին ընդունելով Կենսաբազմազանության մասին կոնվենցիան (ԿԲԿ)՝ Հայաստանի Հանրապետությունը հանձն առավ իրականացնել ԲԳՌ պահպանության եւ կայուն օգտագործման պարտավորություններ, ինչպես նաեւ գենետիկական ռեսուրսների մատչելիության եւ դրանց օգտագործումից ստացված շահույթի արդարացի բաշխման վերաբերյալ պարտականություններ: Ազգային համագործակցային գործընթացի արդյունքում պատրաստվել են ԿԲԿ-ի ներքո պահանջվող զեկույցները:

2014-ին Հայաստանը Կոնվենցիայի քարտուղարությանը ներկայացրեց իր 5-րդ Ազգային զեկույցը, որտեղ որոշարկված են երկրում էկոհամակարգին եւ

կենսաբազմազանությանը սպառնացող վտանգները, դրանց պատճառներն ու հնարավոր հետեւանքները մարդկանց բարեկեցության եւ առողջության վրա, ամփոփված են կենսաբազմազանության պահպանման եւ օգտագործման տարբեր ոլորտների ձեռքբերումներն ու կարիքները, սահմանված են բնապահպանական քաղաքականության եւ համագործակցային ոլորտային ռազմավարությունների թիրախներն ու սկզբունքները՝ կենսաբազմազանության վերաբերյալ Այիչիի նպատակային խնդիրներին համահունչ: Ներկայում մշակման վերջնական փուլում է «Կենսաբանական բազմազանության երկրորդ ազգային ռազմավարությունը եւ Գործողությունների ծրագիրը»:

Հայաստանը չի ստորագրել Կենսաբանական բազմազանության կոնվենցիայի «Գենետիկ ռեսուրսների մատչելիության ու դրանց օգտագործումից ստացվող օգուտների արդարացի բաշխման մասին» Նագոյայի արձանագրությունը, այդուհանդերձ այս հարցի վերաբերյալ բանակցություններ ու հանրային քննարկումների իրականացում է նախատեսվում Կենսաբանական բազմազանության պահպանման վերաբերյալ Գործողությունների ծրագրի նախագծով, որը Կառավարության հաստատմանն է ներկայացվելու 2015 թ. վերջին:

ԿԲԿ-ի եւ բնապահպանական այլ կոնվենցիաների շրջանակներում իրականացվող գործողությունները համակարգվում են Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից՝ այլ նախարարությունների, ՀԿ-ների, գիտական կառույցների եւ քաղաքացիական հասարակության ներգրավմամբ: Համակարգելու եւ բնապահպանական կոնվենցիաներից բխող համապատասխան գործողությունների ժամանակին իրականացումն ապահովելու նպատակով 2011-ին ընդունվեցին Կառավարության որոշումը (N 1594-Ն «Մի շարք բնապահպանական միջազգային կոնվենցիաներից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը հաստատելու մասին») եւ Գործողությունների հնգամյա ծրագիրը (2012-2016 թթ.) միջազգային բնապահպանական կոնվենցիաներով (ԿԲԿ, Ռամսարի կոնվենցիա, «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական եւ բուսական աշխարհի տեսակների միջազգային առելտրի մասին» կոնվենցիա, Բեռնի կոնվենցիա) ստանձնած հանձնառությունների իրականացման վերաբերյալ: Կառավարության որոշմամբ նախատեսված աշխատանքների իրականացման հարցում առաջընթացի վերաբերյալ պարբերաբար տեղեկություն է ներկայացվում ՀՀ Արտաքին գործերի նախարարություն՝ զեկույցների տեսքով:

Հայաստանը ՊԳԿ-ի Պարենի եւ գյուղատնտեսության համար գենետիկական ռեսուրսների հանձնաժողովի անդամ է: Երկիրն իրականացնում է Պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանության եւ կայուն օգտագործման գործողությունների գլոբալ ծրագրի (ԳԳԾ) իրականացման մոնիտորինգ, մասնավորապես 2008-ին Հայաստանը ներկայացրեց ՊԳԲԳՌ վիճակի վերաբերյալ երկրորդ զեկույցը եւ իրականացրեց Գործողությունների առաջին ծրագրի (1-ին ԳԾ) մոնիտորինգ՝ տեղեկատվության փոխանակման ազգային մեխանիզմի ստեղծման միջոցով ([www.pgrfa/gpa/arm](http://www.pgrfa/gpa/arm)): 2015 թ. սկզբին Հայաստանը Պարենի եւ գյուղատնտեսության համար գենետիկական ռեսուրսների հանձնաժողովին ներկայացրեց զեկույցը Գործողությունների երկրորդ գլոբալ ծրագրի մոնիտորինգի իրականացման վերաբերյալ՝ համաձայն զեկույցների ներկայացման նոր ձեւաչափի (նոր WIEWS (Տեղեկատվության եւ վաղ ահազանգման համաշխարհային համակարգ) - [www.fao.org/pgrfa](http://www.fao.org/pgrfa)):

2007-ի մարտի 20-ին երկիրը միացավ Պարենի եւ գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների միջազգային դաշնագրին (ITPGRFA): Այս միջազգային դաշնագրի կողմ լինելով՝ Հայաստանը, ինչպես եւ Դաշնագրի մյուս կողմերը, պետք է կատարի ստանձնած պարտավորությունները՝ բարելավելու բույսերի գենետիկական ռեսուրսների մատչելիությունը, ինչպես ամրագրված է Դաշնագրի Հավելված 1-ում, եւ ապահովելու դրանց օգտագործումից ստացված օգուտների արդարացի բաշխումն ու Բազմակողմ համակարգի (ԲԿՀ) միջոցով բոլորի համար մատչելի դարձնելու երկրի գենետիկական բազմազանությունն ու առնչվող տեղեկությունները սերմերի ազգային հավաքածուներում պահպանվող մշակաբույսերի մասին: ITPGRFA-ով սահմանված սկզբունքներին եւ ընթացակարգերին համահունչ՝ Հայաստանը ԲԿՀ-ում ներառել է ՊԳԲԳՆ-ի 2496 նմուշ՝ դրանք նշելով եվրոպական առցանց կատալոգում (EURISCO):

Հայաստանը դեռեւս հաջողության չի հասել TPGRFA-ի Օգուտի համատեղ օգտագործման հիմնադրամից (Benefit-Sharing Fund) ֆինանսական օժանդակություն ստանալու հարցում: Գործողությունները, որոնք իրականացվում են որպես ITPGRFA-ի ներքո եւ ՊԳԿ-ի Պարենի եւ գյուղատնտեսության համար գենետիկական ռեսուրսների հանձնաժողովի շրջանակներում ստանձնած պարտավորություններ, համակարգվում են Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից:

Ներկայում հավաքածու պահող հաստատությունները դժվարություններ ունեն պահանջվող նմուշները տրամադրելու հարցում՝ ֆինանսական միջոցների պակասի եւ ITPGRFA-ի ներքո երկրի պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության սակավության պատճառով:

Նյութերի փոխանցման ստանդարտ համաձայնագիրը (STMT)՝ որպես Բազմակողմ համակարգի ներքո գենետիկական նյութի տրամադրման եւ ստացման պարտադիր մոդել, միշտ չէ, որ օգտագործվում է:

### **ՊԳԲԳՆ-ՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ**

Շրջակա միջավայրի պահպանությունը, դրա վերականգնումը եւ բնական պաշարների ողջամիտ օգտագործումը սահմանված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (Հոդված 10):

Հայաստանն ունի օրենսդրական լավ զարգացած բազա՝ ապահովելու բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանումը, այդ թվում՝ «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (1999 թ., փոփոխված՝ 2002 եւ 2008 թվականներին), «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքը (1999 թ., փոփոխված՝ 2013 թ.), «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2005 թ., փոփոխված՝ 2011 թ.), «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (2014), «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգիրք» (2005), «Սերմերի մասին» ՀՀ օրենքը (2005 թ., փոփոխված՝ 2008 թ.), «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքը (2014 թ.), «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (2007 թ.), «Սելեկցիոն նվաճումների պահպանության մասին» ՀՀ օրենքը (2000 թ., փոփոխված՝ 2003 թ.), «Սեւանա լճի մասին» ՀՀ օրենքը (2001 թ., փոփոխված՝ 2002 եւ 2012 թթ.), «Բնապահպանական իրավախախտումների հետեւանքով բուսական եւ կենդանական աշխարհին պատճառված վնասի հատուցման մասին» ՀՀ օրենքը (2005 թ.):

Կառավարության մի շարք որոշումներ սահմանում են բույսերի մոնիտորինգի, գույքագրման եւ հաշվառման («Բուսական աշխարհի պետական կադաստրի վարման կարգը հաստատելու մասին» (2008 թ.), «Բուսական աշխարհի մոնիտորինգի

կազմակերպման եւ իրականացման կարգը հաստատելու մասին» (2009 թ.), ինչպես նաեւ պահպանման ու վերարտադրման նպատակով բուսական ռեսուրսների օգտագործման («Բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եւ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» (2014 թ.)) սկզբունքները:

Երկրի օրենսդրական շրջանակը, որը այս կամ այն չափով առնչվում է ՊԳԳՌ արդյունավետ կառավարմանը, վերջին տարիներին զգալիորեն բարելավվել է. մշակվել եւ ընդունվել են մի շարք օրենսդրական ակտեր բուսական աշխարհի, անտառների, բնության հատուկ պահպանվող տարածքների, կրթության եւ առնչվող այլ դաշտերի վերաբերյալ՝ ապահովելու կենսաբազմազանության պահպանումը եւ կայուն օգտագործումը: Մասնավորապես, լրամշակվել է «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքը, մշակվել եւ ՀՀ Կառավարության կողմից ընդունվել են շուրջ 20 որոշումներ՝ ուղղված բնության հատուկ պահպանվող տարածքներին վերաբերող օրենսդրության բարելավմանը:

Փոփոխություններ են կատարվել «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքում, եւ փոփոխված տարբերակը ներկայացվել է հաստատման: Նոր փաստաթուղթը հստակորեն սահմանում է իշխանության տարբեր օղակների իրավասությունները բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման ասպարեզում, նախատեսում է բնության հուշարձանների եւ պահպանվող լանդշաֆտների կառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, բացի այդ՝ ավելացվել է պահպանվող տարածքների նոր կատեգորիա՝ պահպանվող լանդշաֆտն ավելացվել է բնության հատուկ պահպանվող տարածքների 4 կատեգորիաներին:

Բույսերի բազմազանության պահպանության օրենսդրական հենքի բարելավումը եւ բույսերի գենետիկական ռեսուրսների կայուն հենքի ապահովումը շարունակական գործընթաց է, որը տեղի է ունենում հետեւելով միջազգային հանրության կողմից սահմանված պահանջներին եւ փոփոխվող շրջակա միջավայրի թելադրանքով:

Բույսերի բազմազանության պահպանման ազգային համակարգը պետք է բարելավվի Բույսերի նոր սորտերի պաշտպանության միջազգային միությանը (UPOV) միանալու եւ Հայաստանում սելեկցիա իրականացնող պետական կազմակերպությունների համար ամրապնդող եւ խթանող միջավայրի ստեղծման համապատասխան կանոնակարգող շրջանակի ընդունման միջոցով:

### **ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ**

Հայաստանում չի մշակվել ՊԳԳՌ-ների պահպանման եւ կայուն օգտագործման ծրագիր կամ ռազմավարություն, այդուհանդերձ, այս ոլորտի հիմնական նպատակները ներառված են «Հայաստանի Հանրապետության գյուղի եւ գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարություն» փաստաթղթում, որն առանցքային ծրագրային փաստաթուղթ է՝ ուղղված երկրում կայուն գյուղատնտեսության զարգացման գերակայությունների ու կարիքների սահմանմանը: Այս մոտեցումը ամուր կապեր է ապահովում ՊԳԳՌ-ներին առնչվող խնդիրների եւ գյուղատնտեսության միջեւ:

Ռազմավարությունն ուրվագծում է գյուղատնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները եւ սահմանում խնդիրների 17 խումբ, որոնց թվում են բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանման եւ կայուն օգտագործման վերաբերյալ մտահոգությունները: Մշակաբույսերի վայրի ազգակիցների պահպանությունը,

պտղատեսակների եւ խաղողի դաշտային հավաքածուների ստեղծումը, գենետիկական ռեսուրսների ex situ հավաքածուներ պահպանող կազմակերպությունների վերազինումն անհրաժեշտ սարքավորումներով եւ տեխնիկական միջոցներով, բնական խոտհարքների եւ արոտավայրերի բարելավումը, տնտեսական արժեք ներկայացնող տեսակների պլանտացիաների եւ բուծարանների ստեղծումը, եզակի նշանակություն ունեցող գենետիկական ռեսուրսների կրկնօրինակումն անվտանգ պահպանման նկատառումով, գյուղացիական տնտեսությունների պայմաններում (on-farm) բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանման ծրագրերի մշակումն ու իրականացումը եւ այլն՝ այս ամենը Ռազմավարության խնդիրների իրականացմանը հասնելու ճանապարհին իրականացվելիք գործողություններից են:

Ռազմավարությանը կցված Գործողությունների ծրագրով նախատեսվում է Հայաստանում մշակաբույսերի եւ դրանց վայրի ազգակիցների գենետիկական ռեսուրսների պահպանման եւ կայուն օգտագործման վերաբերյալ ծրագրի մշակում եւ իրականացում:

2007 թվականին մշակվել են Հայաստանում բույսերի գենետիկական ռեսուրսների կառավարման եւ օգտագործման ազգային ռազմավարության տարրերը «Ինտեգրված ռազմավարության մշակում՝ բույսերի գենետիկական ռեսուրսների բարելավված օգտագործման միջոցով Հայաստանի պարենային ապահովությունը բարձրացնելու համար» EC/FAO/ICARDA ծրագրի շրջանակներում: Առաջարկված առանցքային մոտեցումները՝ նպատակաուղղված ազգային ինտեգրված համակարգի բարելավմանը, կարող են հիմք ծառայել ազգային ՊԳԲԳՌ ծրագրի մշակման համար:

Ներկայում «Հայաստանի Հանրապետության կենսաբազմազանության ռազմավարություն եւ գործողությունների ծրագիր» փաստաթուղթը վերանայվում է, «Կենսաբազմազանության ռազմավարություն եւ գործողությունների ծրագիր» երկրորդ փաստաթուղթը նախատեսվում է Կենսաբազմազանության քարտուղարությանը ներկայացնել 2015 թ. հուլիսին:

Բացի այդ, ՄԱՇՄԾ/ԳԷՀ «Հայաստանի գյուղական համայնքներում ազրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում» սույն ծրագրի շրջանակներում նախատեսվում է մշակել ազրո-կենսաբազմազանության պահպանման ռազմավարություն:

2014 թ. սեպտեմբերին Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից ընդունվել է բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման նոր ռազմավարություն եւ գործողությունների ծրագիր: Այս փաստաթղթի սուբեռակետում երկու հիմնական խնդիրներ են.

- ապահովել երկրի բնապահպանական կայունություն եւ յուրաքանչյուր անհատի իրավունքը՝ ապրելու առողջ եւ բարենպաստ միջավայրում՝ բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգի արդյունավետության բարելավման եւ բնության ու մշակութային ժառանգության պահպանման միջոցով՝ ներկա եւ ապագա սերունդների համար.
- նպաստել հատուկ պահպանվող տարածքների բնապահպանական, սոցիալ-տնտեսական, գիտական, կրթական, վերականգնողական եւ ոգեղեն արժեքին՝ էկոհամակարգային մոտեցումների կիրառման, մոնիտորինգի եւ հետազոտությունների իրականացման միջոցով:

ԲՀՊՏ-ներին առնչվող օրենսդրության եւ ԲՀՊՏ-ների կառավարման բարելավումը, ինստիտուցիոնալ հարաբերությունների ամրապնդումը, ԲՀՊՏ համակարգում կենսաբանական եւ լանդշաֆտային բազմազանության ներկայացվածության ապահովումը սահմանված են որպես ԲՀՊՏ ռազմավարության գերակայություններ:

Երկրի զարգացման քաղաքականության շրջակա միջավայրին առնչվող ասպեկտներն արտացոլված են «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր» փաստաթղթում՝ ընդունված 2014 թվականին Կառավարության որոշմամբ եւ ուղղված երկրի տնտեսության տարբեր հատվածների ու ճյուղերի քաղաքականությունների մշակման համակարգված ռազմավարական շրջանակի ստեղծմանը, որը կապահովի ազգային կարողությունների համախմբում: Բնության պահպանության հավասարակշռված միջավայրի ապահովումը ռեսուրսարդյունավետ տնտեսության վարման միջոցով դրված է կայուն զարգացման բնապահպանական բաղադրիչի առանցքում: